

Նոյն 1818 Մայիս 19ին Ռուսաց կայսրն Ախմէջիդ կու գայ. Անտոն Արքեպ. Հայ կաթողիկէ Հասարակութեան կողմանէ կը ներկայանայ կայսեր, եւ ժողովրդեան կողմանէ աղերսագիր մը կու տայ: կայսրը շատ սիրով կ'ընդունի զինքը եւ կ'ըսէ՝ Հանգուցեալ Քրիստոսի որովհէ տեղը զինքը Հայ կաթողիկէներու Առաջնորդ պիտի դնէ: Նոյն տարուոյ Յուլիս 12ին կայսերական ուկազ մ'ելաւ՝ որով Անտոնի Արքեպիսկոպոսութիւնը կայսեր կողմանէ կը ճանչցուէր եւ Ռուսաստան մնալու թոյլ կը տրուէր: Իսկ Հոկտ. 10ին տրուեցաւ իրեն կայսերական կառավարութեան կողմանէ լանջախաչ, եւ Դեկտ. 11ին կայսերական ուկազն անուանեց զինքը Հայ կաթողիկէ Արքեպիսկոպոս Մոհչիլեւի, ի միասին յանձնուեցաւ իրեն միանուագ 1000 ռբ. նուէր:

Սակայն, երբ 1818 Յուլիս 12ի ուկազն ելաւ՝ Մոհչիլեւի լատին Մետրապոլիտն Օգոստ. 15ին գրեց Անտոն Արքեպ.ին, որ առ այժմ՝ Ղարասուբազարի «ադմինիստրատոր», (ժողովրդապետ) ըլլայ եւ այնտեղ մնայ՝ մինչեւ որ Ս. Գահէն վիճակաւորի Հաստատութիւնը գայ:

Մոհչիլեւի Հայ կաթողիկէ եպիսկոպոսութեան յաջորդութիւնը յաջողցընելու սոյն ճգնաժամին մէջ՝ Եփրեմ կաթողիկոսի կողմանէ Անտոն Արքեպ.ի դէմ կայսեր Բողոքագիր մը մատուցուած էր, ինչպէս կ'իմացուի յաջորդ դէպքէն:

Երբ 1819 Յունուար 17ին բազմութիւն Հաւատացելոց Անտոն Արքեպ.ին քով Հաւա-